



## Լաբորատոր աշխատանք

### ԱՊԱՐՆԵՐԻ ՀՈՂՄՆԱՀԱՐՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

**Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ.** Ապարների փոքր կտորներ (տուֆ, բազալտ, կրաքար, մարմար), լաբորատոր ունելի, խոշորացույց, սպիրտայրոց, ապակե ջրով լի թաս, սառույցի մանր կտորներ:

**Փորձի ընթացքը.** Ապարների մի քանի կտորներ (մարմար, բազալտ) նախապես թրջել և դնել սառույցի մեջ: Ունելիով վերցնել տուֆի մի կտոր և դանդաղ, մի փոքր տաքացնել սպիրտայրոցի բոցի վրա, այնուհետև ընկղմել սառույցի կամ ջրի մեջ: Խոշորացույցով ուշադիր զննել տուֆի վրա առաջացած ձաքերը: Նույնը կատարել բազալտի և կրաքարի կտորների հետ:

Վերցնել սառույցի մեջ գտնվող մարմարի մի կտոր և դանդաղ տաքացնել թույլ բոցի վրա, լսելի է ապարի ներսում առաջացող ձաքերի առաջացման ձայնը: Հեռացնել սպիրտայրոցը և խոշորացույցով զննել ապարների կտորները:

Փոքրիկ մուրճով հարվածել փորձի ընթացքում օգտագործված և չօգտագործված նույն ապարի 2 կտորների և համողվել դրանցում ձաքերի առկայությունը: **Փորձը հաստատում է բնական պայմաններում խոնավության (ջրի), ջերմության (արեգակնային ճառագայթում) և ջերմաստիճանի տատանման (սառույց) ազդեցությամբ ապարների հողմահարումը:**